

Մայրենի լեզվի անաղարտության մտահոգությանը

Վահան Մելքոնյան

Լեզվի դասեր տալու նպատակ ու հավակնություն բոլոր չունեցալով, մեր լեզվի անաղարտության մտահոգությանը միայն ցանկանում են լեզվական մի քանի դիտողություններ անել:

Շանձին, հանձինս.- Շատ քիչ հեղինակներ են այս երկու ձևերը ճիշտ գործածում: Երկուսն էլ գրաբարյան ներգոյական հոլովի իմաստ արտահայտող ձևեր են: Անձն եւ անձինք գոյականների թեքված ձևերն են՝ **ի** նախդիրով, որն արտահայտում է **մեջ** կապի նիմաստը: Ունեցել են **ի> յ>ի** զարգացումը՝ **իանձին>յանձին>հանձին** (անձի մեջ) եւ **իանձինս>յանձինս>հանձինս** (անձանց մեջ): Մեր գրեթե բոլոր հեղինակները, տարբերակում չդնելով եզակիի ու հոգնակիի միջև, գործածում են միայն հոգնակի՝ **հանձինս** ձևը:

Արմատավորվել է **դա** ցուցական դերանուն անհարկի գործածությունը: Փոխանակ մաքուր հայերենով ասենք՝ կենսաբանությունը լուրջ գիտութիւն է, ռուսերէնի ազդեցութեամբ նախադասության մեջ արհեստականորեն խցկում ենք **դա** ցուցական դերանունը, որն իր հերթին խոսքի նեջ քարշ է տալիս ևս մեկ քերականական միավոր, կետադրական բութ նշանը: և խոսքի պատկերն ամբողջանում է՝ կենսաբանությունը՝ դա լուրջ գիտություն է:

Գեղեցիկ ու տպավորիչ արտահայտվելու մղումից դրդված, մեծ թերևս բոլոր մարզական լրագրողները այս էլ քանի տարի շրջանառության մեջ են մտցրել լեզվական մի «գլուխգործոց»՝ դարձալ գոյի հեղինակ: Հաճախ ավելի «զարդարելով», արտահայտությանը տալիս են «կատարյալ» տեսք՝ դարձավ անչափ գեղեցիկ գոյի հեղինակ: Ի՞նչ է նշանակում «գոյի հեղինակ դառնալ»: Բառերի նման, արտահայտությունները, լեզվական ձևակերպումները ևս կարող են հոմանիշ ունենալ, որոնք սովորաբար միմյանցից տարբերվում են արտահայտած իմաստների նրբերանգներով, և խոսքի մեջ նրանցից ամեն պէտք է գրավի հատկապես իր տեղը: Այդ արտահայտութիւնը բացառության կարգով կարելի է գործածել միայն այն դեպքում, երբ գնդակը պատահաբար, խաղի տրամաբանությունից դուրս իրավիճակում, դիպչի որևէ մեկին եւ հայտնվի դարպասում: Այդ մեկը,

իր կամքից անկախ, կրավորական կերպով կարող է դառնալ գուլի հեղինակ, եթե իհրակէ, այդպիսի իրավիճակ ստեղծւի խաղաղաշտում:

Շատերը որակական ածականի համեմատության նոր աստիճան են «հայտնագործել»: Որակական ածական ունի համեմատության երեք աստիճան՝ դրական /լավ/, համեմատական / ավելի լավ/ և գերադրական/ ամենալավ կամ լաւագոյն/, բայց շատերը գործածում են նաև ամենալավագոյն, ամենավատթարագոյն, ամենածանրագոյն, ամենադժվարագոյն եւ նման սխալ բառեր:

Լեզվի նկատմամբ անփույթ վերաբերմունքի հետևանք է **չէ** եւ **չի** ժխտական օժանդակ բայերի սխալ գործածությունը: Շատերի բառապաշարում **չէ** օժանդակ բայը ընդհանրապես գոյություն չունի, նրանք գործածում են միայն **չի** ձևը, մինչդեռ այդ ձևերից յուրաքանչյուրն ունի գործածության իր ոլորտը: **Չէ** ժխտական օժանդակ բայը դրվում է գոյականի կամ գոյականաբար գործածված բառերի կողքին, ինչպես, օրինակ, քար չէ, գեղեցիկ չէ, վերև չէ, ներքև չէ.մտածել չէ, իսկ չի-ն գործածւում է միայն բայի դիմավոր ժխտական ձևը արտահայտելու դեպքում՝ չի գնում, չի գալիս, չի մտածքւմ, չի նվագել, չի հոգնել:

Նախագիդ, նախագան.- Նախագահ բառը կազմված է նախ եւ գահ արմատներից, որոնք միացած են «ա» հոդակապով: Այդ բառը որոշյալ առումով գործածվելիս ստանում է նախագահը տեսքը: Շատերը չգիտես ինչու, դեն են նետում «հը» հնչյունակապակցությունը և արտասանում են նախագահ ձեւով:

Կրկին, կրկին անգամ.- Կրկին նշանակում է նորից, դարձյալ, երկրորդ անգամ, ևս մեկ անգամ, սակայն շատերը գործածում են կրկին անգամ ձեւով: Սրան հարակից է բազմիցս անգամ սխալ արտահայտությունը: Կրկին եւ բազմիցս բառերը արդեն պարունակում են անգամ բառի իմաստը: Այսպիսով, ճիշտ են կրկին և բազմիցս ձևերը՝ իրենց հոմանիշներով՝ նորից, երկրորդ անգամ, դարձյալ, ևս մեկ անգամ, բազում անգամ:

Արդուկ, հարթուկ.- Արդուկել նախ եւ առաջ նշանակում է գեղեցիկ տեսքի բերել, ձեւ տալ՝ արդուզարդել իմաստը , բայց պարունակում է նաեւ հարթեցնել իմաստը, բայց այդ բառն օգտագործել միայն վերջին իմաստով, սխալ է: Պէտք է գործածել արդուկ եւ արդուկել ձևերը, քանզի գրաբարից մեզ այդպես է ավանդւած և ավելի ընդգրկուն իմաստներ ունեն:

Բռնվել.- այս բառը բավականին հիմնավոր կերպով մտել է ոչ միայն առօրյա- խոսակցական լեզվի մեջ, այլև երբեմն հանդիպում է նաև թարգմանիչների եւ այլ հեղինակների մոտ: Հատկապես տրանսպորտում հաճախ հնչում են մի տեղից բռնվիր կամ բռնվիր արտահայտությունները: բռնվիր-ը բառը նշանակում է այնպես արա, որ թեզ

մեկը բռնի, այլ ոչ թե հակառակը: Ծիշտ են բռնիր կամ մի տեղից, մեկից բռնիր արտահայտությունները:

Գազաթնաժողով, գազաթաժողով.-«Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանում այս բառի առաջին արմատը բերված է գազաթն ձևով: Ինչպես հայտնի է, գրաբարից մեզ ավանդված մի շարք բառեր, ինչպիսիք են, օրինակ, ծուկն, մուկն, շուրթն, գառն, անձն և այլն, արդի հայերենում կորցրել են բառավերջի ն հնչյունը, բայց բառաբարդվելիս այդ հնչյունը վերականգնվում է, ինչպես, օրինակ, ծկնապուր, մկնակեր, շրթնահարմոն, գառնարած, անձնանուն եւ այլն: Զետեւարար, ճիշտ է գազաթնաժողով:

Համատարած սխալ են գործածվում **արդյունք** բառն ու նրա այլ հոլովածները: Թողած **հետեւանք** բառը, որն իմաստային արաշամի նեղ ուղղվածություն չունի, շատերն անվերապահորեն սիրահարվել են արդյունք բառին, որի գործածության «առդիւնում» կարող են արձանագրվել թե՛ դարկան և թե՛ բացասական երևույթներ, ասենք, մեկ մարդ զոհվի , մեկ ուրիշ պարզևատրվի, մի արտ կարկտահարվի, մյուսը առատ բերք տա: Այդպես էլ հաճախ որոշ հեղինակներ **պատճառով** բառի փոխարեն օգտագործում են **չնորհիվ** բառը: Յայտնի է, որ **արդյունքում** և **չնորհիվ** առերևույթ արտահայտում են դրական իրողություններ, իսկ **հետեւանքով** և **պատճառով** բառերը՝ բացասական: Առաջինները երկրորդների իմաստով կարելի է գործածել, եթե դրանք ասվեն հեզմական առոգանությամբ կամ գրաւոր խոսքի պարագայում առնվեն չակերտների մեջ: Որոշ հեղինակներ էլ գործածում են **ի չնորհիվ ձեւը**, որը սխալ է, ճիշտ է **չնորհիվ** ձևը:

Ոմանք լեզուական մեղանչում են կատարում **պատճեն** բառի գործածության դեպքում: Պետք է գիտենալ, որ ուղիղ ձևը ոչ թե **պատճե** է, այլ **պատճեն**, որը որոշյալ առման դեպքում դառնում է պատճենը:

Ինչո՞ւ ինչի համար.- այս ձևերը հոմանիշներ են և, չնայած որոշ դեպքերում փոխարինում են միմյանց, ունեն իմաստային որոշակի տարբերակում: Այսպես, ինչո՞ւն թեև հիմնականում ենթադրում, երբեմն գործածվում է նախ ինչի՞ հաամր-ի (նպատակ) փոխարեն: Սակայն կան հեղինակներ, ովքեր գործածում են ինչո՞ւ համար սխալ ձևը: Քանի որ ինչո՞ւն-ը իր մեջ արդեն պարունակում է համար իմաստը, փաստորեն ստացվում է կրկնաբանություն: Պետք է գործածել կամ ինչի՞ համար, կամ պարզապես ինչո՞ւ ձևը:

Առօրյա խոսակցական լեզվում է օժանդակ բայը տեղը փառաւորապես զիջել է **ա**-ին, բայց երբ հնչում է , այն էլ գրագետ համարվող մարդու շուրթերից, մեղմ ասած, հաճելի չէ:

Դարձյալ ռուսերեն ազդեցությամբ շատերը սխալ են գործածում **ակնոց** բառը, գրում կամ ասում են **ակնոցներ**, իհարկե, նկատի ունենալով միայն մեկ առարկա: Ռուսերենում այդ բառերը, ձեռով հոգնակի են, հմաստով՝ եզակի: Ուրեմն՝ ակնոցներ նշանակում է մեկից ավելի ակնոց:

Այսքանով, իհարկե, չի սպառվում լեզվական աղավաղումների ցանկը, որոնք այսօր արտահայտւում են մեր գրավոր ու բանավոր խոսքում, բայց հնարավոր չէ լրագրական մեկ հոդվածի շրջանակներում բոլորին անդրադառնալ: